նախագիծ

արձանագրային

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄԱՍԻՆ>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով երկակի նշանակության ապրանքների տարանցիկ փոխադրման, երկակի նշանակության տեղեկությունների և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության բնագավառում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները, երկակի նշանակության ապրանքներ արտահանող սուբյեկտների իրավունքները, պարտականությունները, երկակի նշանակության տեղեկատվություն և մտավոր գործունեության արդյունքներ փոխանցող սուբյեկտների իրավունքները և պարտականությունները։

Հոդված 2. Սույն օրենքում օգտագործվող հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

երկակի նշանակության ապրանքներ (այսուհետ՝ հսկվող ապրանքներ)՝ բոլոր տեսակի գույք, որոնք կիրառվում են քաղաքացիական նպատակների համար ու իրենց բնույթին և հատկություններին համապատասխան կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով՝ ներառյալ զանգվածային ոչնչացման զենքի և դրանց փոխադրման միջոցների ստեղծման համար,

երկակի նշանակության տեղեկատվություն և մտավոր գործունեության արդյունքներ՝ /այսուհետ՝ հսկվող ոչ նյութական արժեքներ/ ցանկացած բնույթի տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունք, համակարգչային ծրագրեր, որոնք կիրառվում են քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին համապատասխան կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով՝ ներառյալ զանգվածային ոչնչացման զենքի և դրանց փոխադրման միջոցների ստեղծման համար։ Տեղեկատվությունը կամ մտավոր գործունեության արդյունքը համարվում է երկակի այն պահից, երբ այն տիրապետողը գիտակցում է, որ այդ տեղեկատվությունը կամ մտավոր գործունեության արդյունքը, բացի քաղաքացիական նպատակներից կարելի է օգտագործել ռազմական նպատակներով՝ ներառյալ զանգվածային ոչնչացման զենքի և դրանց փոխադրման միջոցների ստեղծման համար,

զանգվածային ոչնչացման զենք՝ միջուկային, քիմիական և կենսաբանական զենք.

փոխադրման միջոցներ՝ հրթիռներ և հեռակառավարվող թռչող սարքեր, որոնք կարող են օգտագործվել ռազմական նպատակներով՝ ներառյալ զանգվածային ոչնչացման զենքի փոխադրման համար,

հսկվող ապրանքների արտահանում՝ հսկվող ապրանքների դուրս հանումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից.

հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրում՝ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով հսկվող ապրանքների տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմինը,

հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում՝ հսկվող ոչ նյութական արժեքների բանավոր, գրավոր, էլեկտրոնային հաղորդակցության կամ հեռահաղորդակցության համակարգի միջոցներով հաղորդումը, տրամադրումը, ինչպես նաև որևէ այլ ձևով մատչելի դարձնելը այլ անձանց Հայաստանի Հանրապետության սահմանից դուրս,

շրջանառության հսկողություն՝ սույն օրենքով սահմանված կարգով հսկվող ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման նկատմամբ կիրառվող միջոցառումների համակարգ, որոնց նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը,

վերջնական օգտագործող՝ օտարերկրյա պետություն, օտարերկրյա պետության իրավաբանական և ֆիզիկական անձ, որը Հայաստանի Հանրապետությունից արտահանվող կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող հսկվող ապրանքի, ինչպես նաև հսկվող ոչ նյութական արժեքների իրական օգտագործողն է.

վերջնական օգտագործում՝ վերջնական օգտագործողի կողմից հսկվող ապրանքի և հսկվող ոչ նյութական արժեքների կիրառում հայտարարագրված նպատակին համապատասխան,

վերջնական օգտագործողի հավաստագիր՝ հսկվող ապրանքներ և/կամ հսկվող ոչ նյութական արժեքներ ստացող պետության կամ այդ պետության անձի /իրավաբանական կամ ֆիզիկական/ անվանման, դրա գտնվելու և գործունեության վայրի մասին, արտահանվող հսկվող ապրանքների կամ փոխանցվող հսկվող ոչ նյութական արժեքների նկարագրի մասին, այդ ապրանքների, տեղեկությունների կամ մտավոր գործունեության արդյունքների վերջնական օգտագործման նպատակի մասին տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որը նաև հավաստվում է, որ նշված ապրանքները և/կամ տեղեկատվությունը չեն փոխանցվի որևէ երրորդ երկիր կամ անձի, կամ չեն օգտագործվի հայտարարագրված նպատակից բացի որևէ այլ նպատակով՝ առանց արտահանող երկրի պետական կառավարման մարմնի գրավոր և պատշաճ ձևով վավերացված համաձայնության: Վերջնական օգտագործողի հավաստագիրը, ներմուծող երկրի օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում, հաստատվում է վերջնական օգտագործողի երկրի իրավասու պետական կառավարման մարմնի կողմից,

համապատասխանության ներկազմակերպական ծրագիր՝ կազմակերպչական, վարչական, տեղեկատվական և այլ բնույթի միջոցառումներ, որոնք իրականացնում են արտահանող սուբյեկտները շրջանառության հսկողության կանոնները պահպանելու նպատակով:

Հոդված 3. Շրջանառության հսկողության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Շրջանառության հսկողության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան սույն օրենքում, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 4. Շրջանառության հսկողության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները

1. Շրջանառության հսկողության ոլորտում իրականացվող Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը նրա ներքին և արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասն է:

2. Շրջանառության հսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետության քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքներն են.

1) հսկվող ապրանքների արտահանման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլատվական մեխանիզմի, տարանցիկ փոխադրման դեպքում՝ ծանուցման մեխանիզմի կիրառումը,

2) շրջանառության հսկողության վերաբերյալ հարցերում օրինականության, հրապարակայնության և տեղեկատվության մատչելիության ապահովումը,

3) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերի առաջնայնությունը,

4) միջազգային նորմերին և պրակտիկային շրջանառության հսկողության մեթոդների և ընթացակարգերի համապատասխանեցումը և ներդաշնակեցումը,

5) հոկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման նկատմամբ հսկողության բնագավառում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը։

Հոդված 5. Շրջանառության հսկողության նպատակները

Շրջանառության հսկողության նպատակներն են.

1) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերի պաշտպանությունը,

2) Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը։

Հոդված 6. Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը

1. Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

2. Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկին որևէ ապրանքի պատկանելիության վերաբերյալ փորձագիտական եզրակացությունը տրամադրվում է «Համապատասխանության գնահատման մասինե օրենքով սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների կողմից։

Գ Լ ՈՒ Խ 2

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 7. Շրջանառության հսկողություն իրականացնող մարմինը

1. Շրջանառության հսկողության ոլորտում պետական քաղաքականությունն իրականացվում է շրջանառության հսկողության պետական կառավարման լիազոր մարմնի միջոցով /այսուհետ՝ Լիազոր մարմին/, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ։

2. Շրջանառության հսկողության ոլորտում Լիազոր մարմինը թույլտվության տրամադրման հարցերը համաձայնեցնում է շահագրգիռ մյուս պետական կառավարման մարմինների հետ՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով։

3. Լիազոր մարմնի լիազորություններն են՝

1) հսկվող ապրանքների արտահանման, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվությունների տրամադրումը կամ մերժումը, թույլտվությունների գործողության կասեցումը և դադարեցումը,

2) հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրման վերաբերյալ համապատասխան սուբյեկտի ծանուցումների ընդունումը և օրենքով սահմանված դեպքերում տարանցիկ փոխադրման արգելումը,

3) շրջանառության հսկողության զարգացման և կատարելագործման ուղղությամբ միջոցառումների մշակումը,

4) հսկվող ապրանքների արտահանում, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում իրականացնող սուբյեկտների կողմից իրականացված արտահանման և/կամ փոխանցման վերաբերյալ հաշվետվությունների ընդունումը,

5) հսկվող ապրանքների արտահանում, տարանցիկ փոխադրում, հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում իրականացնող սուբյեկտների մոտ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստուգումների անցկացումը,

6) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով, ներմուծող երկրում ստուգումների իրականացումը՝ կապված արտահանվող ապրանքների կամ փոխանցվող ոչ նյութական արժեքների վերջնական օգտագործողի և վերջնական օգտագործման հետ,

7) շրջանառության հսկողության ոլորտում միջազգային համագործակցության հարցերի քննարկմանը մասնակցությունը,

8) շրջանառության հսկողության նպատակների համար ՀՀ օրենսդրության համաձայն հսկվող ապրանքների արտահանում և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում իրականացնող սուբյեկտներից փաստաթղթեր, տեղեկություններ, գրավոր և բանավոր բացատրություններ պահանջելը և ստանալը։

Հոդված 8. Շրջանառության հսկողության համար անհրաժեշտ

համապատասխանության ներկազմակերպական ծրագիրը

1. Հսկվող ապրանքների արտահանում և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցում իրականացնող սուբյեկտների մոտ շրջանառության հսկողությանը վերաբերող օրենսդրության պահանջներին իրենց գործունեության համապատասխանությունն ապահովվում է սուբյեկտների կողմից ներդրված համապատասխանության ներկազմակերպական ծրագրի միջոցով:

2. Համապատասխանության ներկազմակերպական ծրագրի կազմակերպման եղանակների ընտրության և դրա գործածության հետ կապված հարցերը յուրաքանչյուր արտահանող սուբյեկտ լուծում է իր հայեցողությամբ՝ անհրաժեշտության դեպքում դիմելով Լիազոր մարմնին տեղեկատվական-մեթոդական աջակցություն ստանալու նպատակով:

Գ Լ ՈՒ Խ 3

ՀՍԿՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀՍԿՎՈՂ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 9. Հսկվող ապրանքների արտահանման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման հիմքերը

1. Սույն օրենքով սահմանված կարգով հսկվող ապրանքների արտահանումը և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցումը իրականացվում է Լիազոր մարմնի կողմից տրված մեկանգամյա, անհատական, ընդհանուր թույլտվությունների հիման վրա:

2. Մեկանգամյա թույլտվությունը տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացրած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին և իրավունք է տալիս վերջինիս իրականացնել մեկ հսկվող ապրանքի արտահանում կամ հսկվող ոչ նյութական արժեքի փոխանցում մեկ վերջնական օգտագործողի: Մեկանգամյա թույլտվության հիման վրա անձը կարող է իրականացնել արտահանման կամ փոխանցման միայն մեկ գործողություն:

3. Անհատական թույլտվությունը տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացրած իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը և իրավունք է տալիս վերջինիս իրականացնել հսկվող ապրանքի արտահանում կամ հսկվող ոչ նյութական արժեքի փոխանցում մեկ վերջնական օգտագործողի: Անհատական թույլտվությունը տրամադրվում է առավելագույնը երկու տարի ժամկետով՝ առանց արտահանման կամ փոխանցման գործողությունների, ինչպես նաև արտահանվող կամ փոխանցվող ապրանքների քանակի սահմանափակման:

4. Ընդհանուր թույլտվությունը տրամադրվում է սույն օրենքով սահմանված կարգով դիմում ներկայացրած իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը և իրավունք է տալիս վերջինիս իրականացնել ապրանքային դիրքերով առանձնացված հսկվող ապրանքների արտահանում կամ հսկվող ոչ նյութական արժեքի փոխանցում հայտարարված մի քանի վերջնական օգտագործողների: Ընդհանուր թույլտվությունը տրամադրվում է առավելագույնը երեք տարի ժամկետով՝ առանց արտահանման կամ փոխանցման գործողությունների, ինչպես նաև արտահանվող կամ փոխանցվող ապրանքների քանակի սահմանափակման:

5. Անհատական և ընդհանուր թույլտվությունների հիման վրա արտահանում և/կամ փոխանցում իրականացնելու իրավունք ստացած անձը պարտավոր է ոչ ուշ քան արտահանման կամ փոխանցման գործողությունը կատարելուց հետո 10-օրյա ժամկետում Լիազոր մարմնին ներկայացնել արտահանման կամ փոխանցման իրականացման վերաբերյալ հաշվետվություն՝ կցելով արտահանված ապրանքների և/կամ փոխանցված արժեքների ցանկը և դրանց հանձնման-ընդունման փաստը հավաստող համապատասխան փաստաթղթի պատճեն:

6. Անհատական և ընդհանուր թույլտվությունների տրամադրման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով:

Հոդված 10. Հսկվող ապրանքների արտահանման և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվություն ստանալը

1. Հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվություն ստանալու համար նշված ապրանքները արտահանող և/կամ ոչ նյութական արժեքներ փոխանցող անձը Լիազոր մարմնին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում, որտեղ իրավաբանական անձի համար նշվում է իրավաբանական անձի անվանումը, կազմակերպա-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, ինչպես նաև իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ հայցվող թույլտվության տեսակը և ժամկետը,

2) իրավաբանական անձի համար կանոնադրության պատճեն, անհատ ձեռնարկատիրոջ համար պետական գրանցման վկայականի պատճեն,

3) սույն օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ պարբերության պահանջներին համապատասխանող վերջնական օգտագործողի հավաստագիրը,

4) արտահանման ենթակա հսկվող ապրանքների կամ փոխանցվող ոչ նյութական արժեքների տեխնիկական նկարագրերը,

5) հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցումը հավաստող պայմանագրի պատճեն,

6) ապրանքի, տեղեկատվության կամ մտավոր գործունեության արդյունքի հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների ցանկին պատկանելիության վերաբերյալ արտահանող սուբյեկտի գրավոր հայտարարագիրը կամ սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված փորձագիտական եզրակացությունը,

7) անհատական և ընդհանուր թույլտվություններ հայցելու դեպքում՝ պետական տուրքի վճարման անդորրագիրը։

2. Սույն հոդվածի առաջին մասի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման պահանջը չի տարածվում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մշտական բնակության մեկնող անձանց վրա։

3. Հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման թույլտվություն տալու կամ մերժելու որոշումն ընդունվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված փաստաթղթերը Լիազոր մարմնին ներկայացնելու պահից 20 աշխատանքային օրվա ընթացքում։

Հոդված 11. Դիմումի մերժումը, թույլտվության գործողության կասեցումը և դադարումը

1. Դիմումի մերժման հիմքերն են՝

1) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի ներկայացրած փաստաթղթերը թերի են,

2) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի ներկայացրած փաստաթղթերը կեղծ են,

3) արտահանման կամ փոխանցման նախատեսվող գործողությունների և սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների միջև հակասությունների առկայությունը։

2. Թույլտվություն ստանալու դիմումը Լիազոր մարմնի կողմից մերժվելու դեպքում, վերջինս դրա մասին որոշումը կայացնելու պահից երօրյա ժամկետում պատշաճ կերպով ծանուցում է դիմում ներկայացրած անձին՝ նշելով մերժման հիմքերը։

3. Լիազոր մարմնի կողմից թույլտվության գործողությունը կասեցվում է եթե ի հայտ են եկել հանգամանքներ, որոնց պայմաններում հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման և սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների միջև կարող են ծագել հակասություններ։ Թույլտվության կասեցումը չի կարող

տնել 30 օրացույցային օրից ավել։ Նշված ժամկետը լրանալուց հետո Լիազոր մարմնի կողմից թույլտվության դադարեցման մասին ծանուցում չստանալու դեպքում արտահանող կամ փոխանցող սուբյեկտը իրավունք է ստանում շարունակել արտահանման կամ փոխանցման գործողությունները։

4. Լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության գործողությունը դադարեցվում է.

1) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի դիմումի հիման վրա,

2) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի լուծարման կամ մահվան դեպքում,

3) եթե պարզվել է, որ թույլտվությունը ստանալիս անձը ներկայացրել է կեղծ կամ թերի փաստաթղթեր,

4) եթե կասեցման հիմք հանդիսացած հանգամանքների ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ հսկվող ապրանքների արտահանման կամ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման և սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակների միջև առկա են հակասություններ,

5) արտահանող կամ փոխանցող սուբյեկտի կողմից շրջանառության հսկողության բնագավառը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում։

5. Սույն հոդվածով սահմանված թույլտվության կասեցումը կամ դադարեցումը ուժի մեջ մտնելու պահից երկօրյա ժամկետում Լիազոր մարմինը պատշաճ կերպով ծանուցում է արտահանող կամ փոխանցող սուբյեկտին թույլտվության կասեցման կամ դադարեցման մասին՝ նշելով համապատասխան հիմքերը։

Հոդված 12. Հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրման մասին ծանուցումը

1. Հսկվող ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումն իրականացվում է տարանցիկ փոխադրման մասին նախնական ծանուցման հիման վրա։ Ծանուցումը Լիազոր մարմնին է ներկայացվում հսկվող ապրանքների՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը հատելու նախատեսված ժամկետից առնվազն 15 օր առաջ։ Տարանցիկ փոխադրման մասին ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) փոխադրման ենթակա հսկվող ապրանքների անվանացանկը,

2) փոխադրման միջոցը,

3) արտահանողի, փոխադրողի և ներմուծողի անվանումը (անունը),

4) երթուղին,

5) տարանցիկ փոխադրման նախատեսվող ժամկետը,

6) փոխադրման ենթակա հսկվող ապրանքների վերջնական օգտագործման նպատակը։

2. Ծանուցմանը կցվում է արտահանող պետության հսկվող ապրանքների արտահանման համապատասխան թույլտվության և վերջնական օգտագործողի հավաստագրի պատճենները։

3. Լիազոր մարմինը ծանուցում ստանալու պահից 3-օրյա ժամկետում նախատեսվող տարանցիկ փոխադրման մասին տեղյակ է պահում շահագրգիռ պետական կառավարման մարմիններին՝ կցելով սույն հոդվածի 1-ին մասում նշված տեղեկությունները և փաստաթղթերը։

4. Այն դեպքերում, երբ հսկվող ապրանքների տարանցիկ փոխադրումը կարող է հակասել Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին կամ վնասել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության շահերին, Լիազոր մարմինը ծանուցումը ստանալու պահից 10 օրվա ընթացքում այդ մասին տեղեկացվում է տարանցիկ փոխադրում իրականացնող անձին և արգելում է տարանցիկ փոխադրումը։

Հոդված 13. Հայաստանի Հանրապետությունից արտահանված հսկվող ապրանքների մաքսային ռեժիմի փոփոխությունը կամ արտահանման ժամկետների երկարաձգումը

Հայաստանի Հանրապետությունից արտահանված հսկվող ապրանքների մաքսային ռեժիմի փոփոխությունը կամ ժամանակավոր արտահանման ժամկետների երկարաձգումն իրականացվում է սույն օրենքով սահմանված արտահանման ընդհանուր ընթացակարգով։

ԳԼՈՒԽ 4

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 14. Շրջանառության հսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցությունը

1. Շրջանառության հսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցությունն ուղղված է.

1) օտարերկրյա պետությունների հետ համագործակցությանը՝ զանգվածային ոչնչացման զենքի, դրա փոխադրման միջոցների, ինչպես նաև դրանց ստեղծման տեխնոլոգիաների տարածման կանխարգելմանը,

2) միջազգային հարաբերությունների կայուն և անվտանգ համակարգի ձևավորմանը նպաստելուն,

3) շրջանառության հսկողության միջազգային և ներպետական մեխանիզմների կատարելագործմանը, շրջանառության հսկողության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման դեպքերի բացահայտմանը:

2. Շրջանառության հսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցությունն իրականացվում է արտահանման վերահսկողության միջազգային ռեժիմների սկզբունքներին համապատասխան և միջազգային համաժողովներում Հայաստանի Հանրապետության մասնակցության, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ բանակցությունների և խորհրդատվությունների անցկացման միջոցով, տեղեկատվության փոխանակմամբ, ինչպես նաև երկկողմ և բազկակողմ հիմունքներով համատեղ ծրագրերի և այլ միջոցառումների անցկացմամբ:

3. Հայաստանի Հանրապետության շրջանառության հսկողության բնագավառում Լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների և կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների հետ:

4. Շրջանառության հսկողության ներպետական գործընթացներին օժանդակելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է շրջանառության հսկողության բնագավառում հասարակական միավորումների և օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների միջև կապերի հաստատումը:

ԳԼՈՒԽ 5

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 18. Շրջանառության հսկողության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման համար պատասխանատվությունը

Շրջանառության հսկողության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման համար իրավաբանական և ֆիզիկական անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 19. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի սեպտեմբերի 24-ի ՀՕ-7-Ն օրենքը։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 20-րդ հոդվածում.

1. 42-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման անհատական թույլտվություն տալու համար Բազային տուրքի քսանապատիկի չափով

2. Լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 43-րդ մասով.

«երկակի նշանակության ապրանքների արտահանման և Բազային տուրքի երեսնապատիկի չափով

երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման ընդհանուր թույլտվություն տալու համար»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 215-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ երկակի նշանակության նյութերի, սարքավորումների կամ տեխնոլոգիաների, որոնք կարող են օգտագործվել նաև զանգվածային ոչնչացման զենք կամ դրա փոխադրման հրթիռային համակարգեր ստեղծելիս կամ օգտագործելիս» բառերը փոխարինել «, երկակի նշանակության ապրանքների» բառերով։

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 240.1-րդ հոդվածով.

«Հոդված 240.1. Երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման սահմանված կարգի խախտումը։

1. Առանց լիազոր մարմնի թույլտվության երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցումը կամ լիազոր մարմնի թույլտվությամբ նախատեսված պայմանների խախտմամբ դիտավորությամբ երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքերի փոխանցումը՝

պատժվում է ազատազրկմամբ երեքից հինգ տարի ժամկետով։

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված արարքը, որը կատարվել է.

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) պաշտոնական դիրքը չարաշահելով,

3) առաջացրել է ծանր հետևանքներ,

պատժվում է ազատազրկմամբ հինգից յոթ տարի ժամկետով։»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասում «երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հետ կապված փաստաթղթերի հավաստիության» բառերը փոխարինել «երկակի նշանակության ապրանքների արտահանման և երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության հետ կապված գործունեությանը ներկայացվող պահանջներին համապատասխանության» բառերով։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվան տասներորդ օրը։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

՝ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝,՝ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝, ՝ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ՝ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ԵՎ՝ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ՝ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ներկայումս գործող Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման

վերահսկողության մասին ՀՀ օրենքով երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների բնորոշումը սահմանափակվում է միայն զանգվածային ոչնչացման զենքի պատրաստման համար անհրաժեշտ ապրանքներով և տեղեկատվությամբ, ինչը ըստ էության նեղացնում է երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների՝ ժամանակակից աշխարհում ընդունված բնորոշումը: Գործող օրենքը արտահանում է համարում նաև երկակի նշանակության տեխնոլոգիաների, տեղեկատվության և ծառայությունների փոխանցումը, ինչը հակասում է ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածին, որտեղ արտահանումը բնութագրվում է որպես ապրանքների և տրանսպորտային միջոցների դուրս հանումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից դուրս: Այս դեպքում հարցը չի կարող լուծվել ՀՀ մաքսային օրենսգրքում համապատասխան փոփոխություն կատարելու միջոցով, քանի որ արտահանվող արժեքների շարքում տեղեկատվությունը ներառելու դեպքում փաստորեն այն արտահանողների համար լրացուցիչ պարտավորություններ է առաջանելու օրինակ, հայտարարագրել էլեկտրոնային փոստերի և էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով փոխանցվող տեղեկատվությունը, վճարել մաքսային վճարներ և այլն: Բացի այդ, գործնականում անհնար է նաև պարզել, թե՝ արտահանվող տեղեկատվությունը՝ որ պահին է հատել մաքսային սահմանը, ինչը արտահանման պարագայում, ինչպես նաև իրավակիրառության տեսանկյունից /մասնավորապես, իրավախախտումների վերաբերյալ վարույթներ և այլն/ շատ կարևոր է:

Գործող օրենքը երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման ոլորտում կարգավորման լիազորությունները վերապահում է երկակի նշանակության ապրանքների արտահանման հանձնաժողովին: Ներկայացված նախագծով առաջարկվում է սահմանել լիազոր մարմին, որը առավել օպերատիվ եղանակով կարող է արձագանքել տնտեսվարող սուբյեկտների այնպիսի դիմումներին, ինչպիսիք են որոշակի հարցի վերաբերյալ պարզաբանում պահանջելը, ներառյալ իրավական ակտի պարզաբանում, տեղեկատվություն պահանջելը և այլն, լիազոր մարմինը, սերտ համագործակցելով այլ շահագրգիռ մարմինների հետ, առավել արդյունավետ կարող է հսկել ոլորտում ընթացող զարգացումներին և անհրաժեշտության դեպքում արձագանքել և հանդես գալ տարբեր նախաձեռնություններով՝ ներառյալ օրենսդրական նախաձեռնություններով:

Հանձնաժողովը, չհանդիսանալով պետական կառավարման մարմին, չունի նաև պետական կառավարչական հիմնարկի կարգավիճակ ունեցող աշխատակազմ, ինչը գործնականում դժվարեցնում է վերջինիս կողմից իր լիազորությունների կատարումը: Ոլորտի կարգավորման իրավասությունը պետական կառավարման կոնկրետ մարմնին վերապահելու պարագայում ավելի կհստակեցվի իրավախախտումների համար պատասխանատվություն կիրառելու մեխանիզմը: Լիազոր մարմնում ոլորտի համար պատասխանատու

են լինելու կոնկրետ պաշտոնատար անձինք, ինչը իրավախախտումներ կատարվելու դեպքում հնարավորություն կտա իրացնել պետական հարկադրանքի միջոցները նրանց հանդեպ։

Արտահանման վերահսկողության ոլորտում ներկայումս կիրառվող միայն մեկ տեսակի թույլտվությունների մեխանիզմը չի համապատասխանում բազմաբնույթ և բազմաբովանդակ շուկայական տնտեսության պահանջներին։ Ակնհայտ է, որ արտահանող սուբյեկտի համար խոչընդոտներ են ստեղծվում այն դեպքերում, երբ վերջինս պատրաստվում է մեկ տարի անընդմեջ մի քանի խմբաքանակներով երկակի նշանակության ապրանքներ մատակարարել որևէ գնորդի, և պետությունը թույլատրում է այդ մատակարարումը։ Գործող օրենքը պարտադիր է համարում ամեն խմբաքանակի առաքման համար համապատասխան թույլտվության ստացումը, ինչը այսօրվա պայմաններում չի կարող համապատասխանել արտահանող սուբյեկտի պահանջներին։ Հիշատակված խնդիրներին պատշաճ կարգավորում տալու նպատակով անհրաժեշտ է հայեցակարգային բնույթի փոփոխություններ կատարել երկակի նշանակության ապրանքների և ոչ նյութական արժեքների արտահանման և փոխանցման նկատմամբ հսկողության մեխանիզմում, ինչը անհնար է գործող օրենքում փոփոխություններ կատարելով։ Այդ իսկ պատճառով մշակվել է օրենքի նոր նախագիծ, որը ՀՀ օրենսդրությանը, և մասնավորապես, ՀՀ մաքսային օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և ոլորտը կարգավորող մյուս իրավական ակտերի տրամաբանությանը, ինչպես նաև արտահանման հսկողության միջազգային լավագույն փորձի պահանջներին համապատասխան առաջարկում է արտահանման և փոխանցման նկատմամբ հսկողության հետ կապված հարաբերությունների կարգավորում։